ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկ

Հրապարակվել է՝ 04.03.2025թ.

1	Վարկի հիմնական չափանիշներ				
1.1	Նպատակային նշանակություն	ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ոսկյա իրերի գրավադրմամբ սպառողական վարկ			
1.2	Վարկի ձևակերպման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղ (բացառությամբ «Փրայմ», «Մոսկվա» մասնաճյուղերի)			
1.3	Վարկի մարման եղանակ	Մինչև 90 օրվա տոկոսագումարները վճարվում են վարկի տրամադրման պահին, իսկ մնացած տոկոսագումարները՝ ժամկետի ավարտին՝ հիմնական գումարի հետ միասին: Տոկոսագումարը հաշվարկվում է միայն օգտագործված օրերի համար (Տարբերակ 1):	Վարկի ամբողջ ժամկետի համար տոկոսագումարները վճարվում են յուրաքանչյուր ամիս, իսկ վարկի հիմնական գումարը՝ ժամկետի ավարտին: (Տարբերակ 2)	Անուիտետային վճարումներ (Տարբերակ 3)	
1.4	Վարկի արժույթ	ՀՀ դրամ			
1.5	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք	LTV=100%-ի դեպքում՝ AMD՝ 13.5% LTV=90%-ի դեպքում՝ AMD՝ 12.5%	LTV=100%-ի դեպքում՝ AMD՝ 13.5% LTV=90%-ի դեպքում՝ AMD՝ 12.5%	LTV=100%-ի դեպքում՝ AMD - 13.5% LTV=90%-ի դեպքում՝ AMD - 12.5%	13.5%
1.6	Վարկային հաշվի հավելյալ սպասարկմամբ վարկի ստացման ընտրության դեպքում տոկոսադրույքից վեղչ	Տարեկան անվանական տոկոսադրույք հանած 1%:		Տարեկան անվանական տոկոսադրույք հանած 3%:	
1.7	Տարեկան փաստացի տոկոսադրույք	15.3%-24%			
1.8	LTV (Վարկ/Գրավ) առավելագույն հարաբերակցություն	100%			
1.9	Վարկի առավելագույն գումար	5,000,000 ՀՀ դրամ (ավել գումարի դեպքում Բանկի կոմիտեի համապատասխան որոշման համաձայն)			
1.10	Վարկի նվազագույն գումար	30,000 ՀՀ դրամ			
1.11	Վարկի առավելագույն ժամկետ[1]	180 օր	1080 օր	1080 օր	1800 օր
1.12	Վարկի նվազագույն ժամկետ	80 օր	365 օր	365 օր	1081 օր
1.13	Վարկի տրամադրման եղանակ	Վարկը տրամադրվում է անկանխիկ (հաճախորդի անունով Բանկում գործող հաշվի բացակայության դեպքում անվճար բացվում է նոր բանկային հաշիվ)			
1.14	Վարկի վաղաժամկետ մարման արգելք	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառուն/ները իրավունք ունի/են՝ -առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառուն/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: **-վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառուի/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝** **• ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը,** **• ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարմա կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:** **Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:**			

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

1.15	Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	**Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ օրական 0.13% չափով, սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:**		
1.16	Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ	**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**		
1.17	Վարկի հաստատման ժամկետ	Հաշված րոպեների ընթացքում		
1.18	Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Կախված գրավադրվող ոսկու քանակից՝ առավելագույնը մինչև 1 աշխատանքային ժամ		
1.19	Վարկի ամբողջական մարման դեպքում գրավադրված ոսկյա իրերի վարկառու-գրավատուին հետ վերադարձման ժամկետը	Բանկի գործող ընթացակարգի համաձայն՝ Բանկի մասնաճյուղում գտնվող գրավադրված ոսկյա իրերը վերադարձվում են վարկառու-գրավատուին վարկի մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի մասնաճյուղ վարկառուի ներկայանալուն պես: Բացառիկ դեպքերում մասնաճյուղի կառավարչի համաձայնեցմամբ գրավը Հաճախորդին կարող է վերադարձվել անմիջապես վարկը ամբողջությամբ մարելուց հետո կամ նույն աշխատանքային օրվա ընթացքում (գրավը դրամապահոցից նույն օրը հանելու հնարավորության առկայության դեպքում):		
1.20	Ապահովություն	Որպես գրավ ընդունվում են ոսկյա իրեր: Գրավի գնահատման ժամանակ հաշվի չեն առնվում նրա գեղարվեստական արժեքը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը՝ այսինքն գնահատվում է բացառապես ոսկին: Եթե վարդը մի քանի մետաղների և հարգի տարասեռ համաձուլվածք է, ապա գնահատման ենթակա չէ: Այն դեպքում, երբ ընդունվող գրավը պարունակում է սպիտակ ոսկի, ապա ոսկերիչը կարող է գնահատել գրավը, եթե սպիտակ ոսկին չի գերազանցում կամ հավասար է գրավադրող գրավի մաքուր քաշի 50%-ը:		
1.21	Գրավի արժեքի գնահատում	Ոսկյա իրերի գրավի գնահատման արժեքի մասին տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ: **Ոսկյա իրերի գնահատումն իրականացվում է Բանկի կողմից անվճար:** Տարբեր հարգերի 1գ. ոսկու գնահատման արժեքը ներկայացված է Բանկի ինտերնետային կայքում՝ www.vtb.am հասցեով:		
2	**Բանկի միջնորդավճարներ**			
2.1	Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար	**Նախատեսված չէ**		
2.2	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	• մինչև 120 օր (ներառյալ) ժամկետի դեպքում՝ 2.15% վարկի գումարից • 121-ից 180 օր (ներառյալ) ժամկետի դեպքում՝ 2.85% վարկի գումարից, բայց ոչ ավել քան 70,000 AMD	**Միջնորդավճար նախատեսված չէ**	**Միջնորդավճար նախատեսված չէ**
2.3	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (պարտադիր)	**Միջնորդավճար նախատեսված չէ**	Տրամադրված վարկի գումարի 0.6%	Տրամադրված վարկի գումարի 0.4%
2.4	Վարկային հաշվի հավելյալ[2] սպասարկման ամսական միջնորդավճար (կամավոր)	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճարին (պարտադիր) գումարվում է նաև՝ տրամադրված վարկի գումարի 0.15%, բայց ոչ ավել, քան 3,000 ՀՀ դրամ		
2.5	Առանց գրավի ապատման վարկը մարելու դեպքում գրավի պահպանության միջնորդավճար	Վարկը առանց գրավի ապատման մարելու դեպքում, երբ գրավը մնում է Բանկում՝ այն ձևակերպվում է որպես ի պահ ընդունված արժեք և վարկը մարելուց հետո 16-րդ աշխատանքային օրվանից սկսած հետագայում հաճախորդից գանձվում է արժեքների պահպանության միջնորդավճար՝ յուրաքանչյուր օրացուցային օրվա համար գրավի գնահատված արժեքի 0,01%-ի չափով: Վարկառուի մահվան դեպքում գրավի ստացման համար ժառանգի(ների) կողմից ժառանգության վկայականը ներկայացնելու դեպքում գրավի պահպանության միջնորդավճար չի գանձվում:		
3	**Վարկառուին ներկայացվող պահանջներ**			
3.1	Նոր վարկ ձևակերպել ցանկացող հաճախորդների նկատմամբ նվազագույն պահանջը	Վարկի ձևակերպման պահին Բանկում հաճախորդի անունով չպետք է լինեն ժամկետանց և/կամ սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառներով դասակարգված գործող վարկեր:		

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

3.2	Վարկի գումարը/ ժամկետը փոխել ցանկացող հաճախորդների նկատմամբ նվազագույն պահանջները (վարկի գումարի ավելացնելու կամ պակասեցնելու ուղղությամբ հնարավոր ճշգրտմամբ՝ կախված գործարքի ամսաթվի դրությամբ գրավի գնահատված արժեքից)	1. Վարկի երկարաձգման (գործող վարկի գումարի/ժամկետի փոփոխման) պահին տվյալ վարկը չպետք է լինի ժամկետանցված, սակայն բացառապես Հաճախորդի սեփական միջոցների հաշվին տվյալ վարկի գծով բոլոր ժամկետանց պարտավորությունները մարելու դեպքում հնարավոր կլինի իրականացնել երկարաձգումը: 2. Այն դեպքում, եթե վարկի երկարաձգման (գործող վարկի գումարի/ժամկետի փոփոխման) պահին Բանկում հաճախորդի անունով առկա են գործող այլ վարկեր, որոնք դասակարգված են սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պառճառներով, ապա երկարաձգումը հնարավոր կլինի իրականացնել միայն 3 ամիս ժամկետով և վարկի միանգամյա մարման եղանակով: Ընդ որում վարկի պայմանագրային գումարը երկարաձգումից հետո չպետք է լինի ավել, քան գործող վարկի պայմանագրային գումարը: Սակայն դուրս գրված վարկերի երկարաձգումը հնարավոր չէ: 3. Վարկի երկարաձգման (գործող վարկի գումարի/ժամկետի փոփոխման) պահին մինչև գործող վարկի վերջնաժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածը չպետք է 1 օրացուցային ամսից պակաս լինի:
3.3	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Բանկի համապատասխան պահանջներին բավարարող դրական վարկային պատմություն
4	**Լրացուցիչ պայմաններ**	
4.1	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/deposit/bank-account-1 հասցեով:
4.2	Լիազորագրի ձևակերպում Բանկի ներսում	3,900 ՀՀ դրամ
4.3	[1] Վարկի ժամկետի ավելացման պահին գանձվում է ավելացումն իրականացնելու օրվա դրությամբ գործող վարկավորման միջնորդավճարները: Եթե վարկի մարման օրը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, վարկի մարման օր է հանդիսանում հաջորդ աշխատանքային օրը:	
4.4	[2] Վարկային հաշվի հավելյալ սպասարկումը իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունները. - հատուկ ընդհանրացված տեղեկատվական ձևաչափով հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ (ԱՔՌԱ հարցման պատասխանի հիման վրա ձևավորված) տեղեկատվության տրամադրում, - դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ վարկի մնացորդի չափով Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ժամանակահատվածում: Վարկային հաշվի հավելյալ սպասարկման ծառայությունից հրաժարվելու դեպքում տոկոսադրույքից կատարված համապատասխան վեղչը կչեղարկվի և վարկի տարեկան տոկոսադրույքը կբարձրացվի տվյալ վեղչի չափով:	

Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկի տրամադրման համար Վարկառուից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	
1	Պատշաճ կերպով լրացրած դիմում
2	Անձը հաստատող փաստաթուղթ
3	Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ փոխարինող փաստաթուղթ
4	**Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:**

Ուշադրություն՝
Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝
- **Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,**
- **Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,**
- **«ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,**
- **Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ,**
- **Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:**

Ուշադրություն՝
Ֆինանսական կազմակերպության կողմից սպառողին վարկ տրամադրելու դրական որոշման բոլոր գործոնները և վարկի մերժման բոլոր գործոնները, որոնք սահմանված են ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերով, տեղեկատվություն վարկ տրամադրելու որոշումների կայացման համար կիրառվող վարկարժանության գնահատման եղանակների վերաբերյալ (վարկային պատմություն, վարկային սքոր), այդ թվում՝
ա. Վարկային պատմության էությունը, կարևորությունը, ինչպես է այն ձևավորվում, ինչ տեսակի և ինչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում, ինչ պետք է անեն սպառողները սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար և այլն, ինչպես նաև հղում www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:
բ. Վարկային սքորի (կիրառելու դեպքում) էությունը, կարևորությունը, ինչ տեսակի վարկային սքոր է կիրառվում ֆինանսական կազմակերպության կողմից (Ֆայկո, ԱՔՌԱ, սեփական սքոր գնահատական, թե այլ): Սեփական վարկային սքոր կիրառելու դեպքում տեղեկատվություն սքորի հաշվարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնների (օրինակ՝ գործող վարկերի գումար և քանակ, վարկային պատմության երկարություն, վարկային

հարցումներ, ժամկետանց վարկեր և այլն) և դրանց ազդեցության ուղղության (բարձրացնում է, թե իջեցնում է սքորը) վերաբերյալ: ԱՔՌԱ կամ Ֆայկո սքոր կիրառելու դեպքում տեղադրվում են հղումներ www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:
գ. Ինչ քայլեր կարող են ձեռնարկել սպառողները իրենց վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար (օրինակ՝ մարել գործող վարկերի մի մասը, բացառել գործող վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը), ինչպես նաև ինչ գործողություններ չպետք է անեն վարկային պատմության և սքորի վատթարացումից խուսափելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍ ԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ https://www.vtb.am/NewVersion/uploads/ampopagrer/Credit/APY_arm.pdf ՀՂՈՒՄՈՎ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԱԿՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է
Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում: